

ՍԵՎԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՀԱՆՁՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ Քրեական օրենսգրքի 37 հոդվածի համաձայն՝ «Հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը»: ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում որոշակի ճշգրտում է կատարվել սուբյեկտների առնչությամբ: Նախագծի համաձայն՝ «Հանցակցություն է համարվում քրեական պատասխանատվության ենթակա երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը»: Սրանով ճշգրտվում է հանցակցության օբյեկտիվ հատկանիշներից մեկը, այն է՝ հանցագործությանը երկու կամ ավելի անձի մասնակցությունը: Այն, որ հանցակցության դեպքում հանցագործությանը պետք է մասնակցեն երկու կամ ավելի հանցագործության սուբյեկտ համարվող անձինք, իրավաբանական գրականության մեջ վեճերի տեղիք չի տալիս: Վեճերի տեղիք է տալիս մեկ այլ հարց. արդյո՞ք առկա է մի խումբ անձանց կողմից հանցանքը կատարելու հատկանիշն այն դեպքերում, երբ հանցանքը կատարող խմբի անդամներից միայն մեկն է հանցագործության սուբյեկտ և ենթակա քրեական պատասխանատվության, իսկ մյուսները հանցագործության սուբյեկտ չեն՝ քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելու կամ անմեղսունակ լինելու հետևանքով: Սրա վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ և գործնականում տարբեր կարծիքներ են արտահայտվել: Այսպես, ՌԴ գերագույն դատարանի՝ 1992 թ. ապրիլի 22-ի «Բռնաբարությունների գործերով դատական պրակտիկայի մասին» որոշման համաձայն՝ հանցանքը համարվում է խմբի կողմից կատարված

նույնիսկ այն դեպքում, երբ խմբի անդամները քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելու կամ անմեղսունակության պատճառով ենթակա չեն քրեական պատասխանատվության: Փաստորեն, այդ դեպքում հանցանքը կհամարվի խմբի կողմից կատարված և այդ ծանրացնող հանգամանքը կմեղսագրվի խմբի այն միակ անդամին, որը հանցագործության սուբյեկտ է: Որոշ քրեագետներ քննադատում են այս դիրքորոշումն այն հիմնավորմամբ, որ հանցակցությունն ունիվերսալ բնույթ ունի, և դրա դրույթները պետք է վերաբերեն հանցակցության բոլոր ձևերին, նույնիսկ եթե հանցագործության խմբակային բնույթը նախատեսված է Հատուկ մասում որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք¹: Քանի որ խումբը հանցակցության ձև է, իսկ հանցակցությունը ենթադրում է, որ յուրաքանչյուր հանցակից քրեական պատասխանատվության ենթակա անձ է, ապա անմեղսունակներն ու քրեական պատասխանատվության տարիքի չհասածները չեն կարող քրեաիրավական իմաստով խումբ կազմել²: Այս դիրքորոշման քննադատները տարբեր հակափաստարկներ են բերում: Այսպես՝ Ռ. Ռ. Գալիակբարովը գտնում է, որ «խումբ» հասկացությունն ունի երկակի նշանակություն՝ կարող է դրսևորվել որպես հանցակցություն և որպես հանցագործության եղանակ՝ բնութագրելով հանցագործության օբյեկտիվ կողմը³: Քրեական օրենսգրքի Հատուկ մասում առկա են մի շարք այնպիսի հանցատեսակներ, որոնց օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է խմբի կողմից այն կատարելը: Մասնավորապես, այդպիսին են զանգվածային անկարգությունները, ան-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 118 2020

1. Сѣн Курс уголовного права. Общая часть. Т. 1:Учение о преступлении / Под ред. Н.Ф. Кузнецовой, И.М. Тяжковой., М., 2002, էջ 388:
2. Сѣн Кригер Г.А. Квалификация хищений социалистического имущества. М 1971, էջ 24-25:
3. Сѣн Галиакбаров Р. Р. Квалификация групповых преступлений. М., 1980, էջ 35-38:

ծանց իրավունքների կամ անձի դեմ ոտնձգող միավորումներ կազմելը կամ ղեկավարելը: Եթե հանցագործության խմբակային բնույթը հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է, ապա նման դեպքերում այն առկա է, եթե նույնիսկ խմբի անդամներից միայն մեկն է հանցագործության սուբյեկտ: Խմբի կողմից հանցանքը կատարելու փաստը խմբի՝ քրեական պատասխանատվության ենթակա միակ անձին մեղսագրելու կողմնակից են նաև Ա. Ի. Ռառոզը և Գ. Ա. Եսակովը: Վերլուծելով ՌԴ Գերագույն Դատարանի պլենումի՝ 2000 թ. փետրվարի 14-ի որոշումը, որտեղ այն միտքն է արտահայտվել, թե հանցանքի կատարումն այն անձին օգտագործելու միջոցով, որը ենթակա չէ քրեական պատասխանատվության տարիքի կամ անմեղսունակության հետևանքով, պետք է համարվի միջնորդավորված կատարում և նշվածներին օգտագործած անձը պետք է պատասխանատվության ենթարկվի որպես կատարող, գտնում են, որ որոշման մեջ «...անձին օգտագործելու միջոցով» հասկացությունը «անձի հետ համատեղ» հասկացության փոխարեն օգտագործելը նշանակում է, որ Գերագույն Դատարանը նկատի է ունեցել միայն միջնորդավորված կատարման դեպքերը, ինչը չի տարածվում հանցագործությունը խմբի կողմից կատարված լինելու դեպքերի վրա: Երբ քրեական պատասխանատվության ենթակա անձը խմբի հետ մասնակցում է հանցանքի կատարմանը, ապա խմբի կողմից հանցանքի կատարումը պետք է մեղսագրվի նրան՝ անկախ նրանից, որ խմբի մյուս անդամները հանցագործության սուբյեկտ չեն⁴: Հանցանքը խմբի կողմից կատարած լինելը որպես ծանրացող հանգամանք կամ հասարակ հանցակազմի հատկանիշ անձին մեղսագրելու կողմնակիցները բերում են նաև կոնկրետ օրինակներ: Մասնավորապես՝ Ռ. Ռ. Ալիակբարովը բերում է խմբակային բռնաբարության օրինակը: Ասենք՝ բռնաբարությունը կատարվում է երկու անձի կողմից, որոնցից մեկը բռնություն է գործադրում, իսկ մյուսը սեռական հարաբերություն է ունենում: Ենթադրենք սեռական հարաբերություն ունեցողը հասել է քրեական

պատասխանատվության ենթակա լինելու տարիքի, իսկ բռնություն գործադրողը, որը սեռական հարաբերություն չի ունենում, քրեական պատասխանատվության ենթակա չէ՝ տարիքը լրացած չլինելու պատճառով: Այս դեպքում եթե բացառենք խմբի առկայությունը, ապա կստացվի, որ հանցագործությունն ընդհանրապես չի կատարվել, որովհետև սեռական հարաբերություն ունեցողը կատարել է տվյալ հանցակազմի՝ օբյեկտիվ կողմի միայն մի մասը: Քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի՝ հանրորեն վտանգավոր արարքները հանցակցություն չեն, բայց ինքնուրույն իրավաբանական նշանակություն ունեն, քանի որ դրանք բնութագրում են հանցագործությունը կազմակերպող կամ կատարող՝ հանցագործության սուբյեկտ համարվող անձի արարքները: Ուրեմն, նման դեպքերում հանցանքը խմբի կողմից կատարած լինելու հատկանիշը պետք է մեղսագրել հանցագործության սուբյեկտ համարվող անձին⁵:

Ասենք համակարծիք են այն հեղինակներին, որոնք գտնում են, որ խումբը հանցակցության ձև է, ուստի դրան պետք է հատուկ լինեն հանցակցության բոլոր հատկանիշները: Ընդ որում, մեր կարծիքով՝ խոսքը ոչ միայն հանցագործության սուբյեկտների առկայության մասին է, այլև մեղքի ձևի ու փոխադարձ սուբյեկտիվ կապի: Դիտավորությունը, որը հանցակցության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է, ենթադրում է արարքի սոցիալական էության, նշանակության գիտակցում, ինչը բացակայում է անմեղսունակի կամ քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի կողմից արարքը կատարելու դեպքում: Նման դեպքերում բացակայում է նաև փոխադարձ սուբյեկտիվ կապը: Իսկ սա նշանակում է, որ նման դեպքերում բացակայում են ոչ միայն հանցակցության օբյեկտիվ հատկանիշներից մեկը, այն է՝ երկու կամ ավելի սուբյեկտի մասնակցությունը հանցագործությանը, այլև սուբյեկտիվ հատկանիշները, այն է դիտավորությունն ու փոխադարձ սուբյեկտիվ կապը: Ուստի, կարծում ենք, որ հանցանքը խմբի կողմից կատարած լինելու հանգամանքը կարող է մեղ-

4. Տե՛ս **Рарог А. И., Есаков Г. А.** Понимание Верховным Судом РФ «группы лиц» соответствует принципу справедливости // Российская юстиция. 2002. №1. Стр 51-53:
5. Տե՛ս **Галиакбаров Р. Р.** Как квалифицировать убийство и изнасилование, совершенное групповым способом // Российская юстиция. 2000. №10. Стр 293-294:

սագրվել միայն այն դեպքում, երբ հանցագործության կատարմանը մասնակցում են հանցագործության սուբյեկտ համարվող երկու կամ ավելի անձ: Այն դեպքերում, երբ հանցագործությանը մասնակցողներից միայն մեկն է հանցագործության սուբյեկտ՝ խմբի հատկանիշը բացակայում է: Նման դեպքերում արարքը պետք է որակել որպես հանցանքը խմբի կողմից կատարելու փորձ՝ փաստական սխալի կանոններով: Նույն դիրքորոշմանն է Վ. Ս. Կոմիսարովը⁶: «Քրեական իրավունքի հանրագիտարանի» հեղինակներն այս տեսակետը սխալ են համարում այն հիմնավորմամբ, որ հանցափորձի դեպքում հանցագործությունն ավարտին չի հասնում անձի կամքից անկախ հանգամանքներով, իսկ այս դեպքում հանցագործությունը փաստորեն ավարտվում է⁷: Կարծում ենք, որ այս քննադատությունը տեղին չէ: Մեր կարծիքով՝ հանցագործությունն ավարտվում է այն դեպքում, երբ իրագործվում է կոնկրետ հանցակազմը: Հանցագործության ավարտի ցուցիչը տվյալ հանցակազմի բոլոր հատկանիշների առկայությունն է: Եթե հանցակազմի որևէ հատկանիշ բացակայում է, ապա ավարտված հանցագործության մասին խոսելն ավելորդ է: Որպես ասվածի ապացույց բերենք ակնհայտ հղի կնոջ սպանության դեպքը: Եթե անձը կարծում է, թե կինը հղի է և սպանում է նրան, սակայն պարզվում է, որ կինը հղի չէր, ապա քրեագետների մեծ մասի կարծիքով՝ արարքը պետք է որակվի որպես ակնհայտ հղի կնոջ սպանության փորձ:

Ինչ վերաբերում է վերը բերված բռնաբարության օրինակին, ապա նշենք հետևյալը: Սեռական հարաբերությունը բռնաբարության հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է: Կատարող է համարվում նաև այն անձը, որն իրականացնում է հանցագործության օբյեկտիվ կողմի մի մասը: Մեր կարծիքով՝ հանցագործության օբյեկտիվ կողմի մի մասն անձը կարող է իրականացնել՝ օգտվելով այլոց արարքներից, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծում իր կողմից այն կատարելու համար: Ընդ որում, այլոք, որոնց արարքներից օգտվում է անձը, կարող են և հանցագործության սուբյեկտ չլինել:

Իրավիճակը փոքր-ինչ այլ է այն դեպքերում, երբ հանցավորը գիտակցաբար է օգտագործում այնպիսի անձանց, ովքեր ենթակա չեն քրեական պատասխանատվության: Մասնավորապես, խմբի կազմում գնում է հանցանքի կատարման կամ հանցանք կատարելու նպատակով խումբ է ստեղծում՝ այդ թվում կայուն խումբ՝ հանցավոր կազմակերպություն, հանցավոր համագործակցություն՝ գիտակցաբար խմբի մեջ ընդգրկելով այնպիսի անձանց, ովքեր ենթակա չեն քրեական պատասխանատվության: Բնականաբար, նման դեպքերում հանցափորձի մասին խոսելն ավելորդ է: Կարծում ենք, որ նման դեպքերում հանցավոր արարքը պետք է որակել այլ կանոններով: Մասնավորապես, եթե հանցավորի արարքը սահմանափակվել է միայն խումբ կամ համագործակցություն ստեղծելով, որոնք ոչ մի այլ հանցանք չեն կատարել, ապա անձը պետք է պատասխանատվության ենթարկվի այն հանցանքները կատարելու նախապատրաստության համար, որոնց կատարումը ծրագրավորված էր հանցավորի կողմից: Խմբի կողմից կոնկրետ հանցանք կատարելու դեպքում անձը պետք է պատասխանատվության ենթարկվի այդ հանցանքը կատարելու համար (հանցագործության միջնորդավորված կատարում): Եթե հանցավորն ինքն էլ մասնակցում է հանցագործության օբյեկտիվ կողմի կատարմանը, ապա նրա արարքը պետք է որակել առանց նշված ծանրացնող հանգամանքի, իսկ որպես քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք պետք է հաշվի առնվի նշված անձանց օգտագործելու փաստը (քր. օր.-ի հոդված 63-ի առաջին մասի 5-րդ կետ): Բայց վերոգրյալ վերջին իրավիճակն արդարացի լուծելու համար առաջարկում ենք այլ արմատական լուծում այն հոդվածներում, որտեղ որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է հանցանքը խմբի կողմից կատարելը, որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք նախատեսել նաև հանցանքն այնպիսի անձի հետ կատարելը, որը ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Հանցակցության հաջորդ հատկանիշն է հանցագործությանը մասնակցելու համատե-

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 118 2020

6. Снѝ Курс уголовного права. Общая часть. Т. 1: Учение о преступлении / Под ред. Н. Ф. Кузнецовой, И. М. Тяжковой. М., 2002, էջ 389:
7. Снѝ Энциклопедия уголовного права. Т.6, СПб 2007, էջ 35:

ղությունը:

Մենք չենք անդրադառնա համատեղության հատկանիշի վերաբերյալ քրեական իրավունքի տեսության մեջ առկա տարբեր տեսակետներին: Դրանք մանրամասն քննարկվել են «Քրեական իրավունքի հանրագիտարանի» 6-րդ՝ հանցակցությանը նվիրված հատորում⁸: Որպես աշխատանքային տարբերակ ընտրել ենք հենց այդտեղ առկա դիրքորոշումը: Ըստ դրա՝ համատեղությունը հանցակցության ժամանակ նշանակում է, որ բոլոր հանցակիցներն իրենց ներդրումն են ունենում բոլորի համար ընդհանուր հանցագործության մեջ⁹: Համատեղ մասնակցությունը բնութագրվում է երեք տարրերով՝ 1) հանցակիցների արարքների համատեղություն, 2) հանցավոր արդյունքի համատեղություն և 3) առաջին ու երկրորդ տարրերի միջև պատճառահետևանքային պայմանավորվածություն¹⁰: Ընդ որում, հանցավոր արդյունք ասելով պետք է հասկանալ ոչ միայն հանրորեն վտանգավոր հետևանքներն առաջանալու, այլև կատարողի կողմից հանցանքը կատարելու փաստը: Ինչ վերաբերում է պատճառահետևանքային պայմանավորվածությանը, ապա մեզ հետաքրքրող խնդրի շրջանակներում կարևոր է նշել, որ եթե խոսքը հանրորեն վտանգավոր հետևանքների մասին է, ապա պատճառական կապն առկա է կատարողի արարքի և դրանց միջև. մյուս հանցակիցների արարքները միայն պայմանի դեր են կատարում, իսկ եթե խոսքը կատարողի կողմից հանցանքը կատարելու մասին է, ապա մյուս հանցակիցների արարքները պատճառի դեր են կատարում: Սակայն կարևոր է մի ճշտում անել. մյուս հանցակիցների արարքների մասին խոսելիս նկատի ունենք հիմնականում դրդիչի արարքները, որոնցով նա կատարողի մեջ հանցանք կատարելու դիտավորություն է առաջացնում: Նույնը կարելի է ասել կազմակերպիչի մասին այն դեպքերում, երբ նա նաև դրդիչի դեր է կատարում: Մնացած դեպքերում, երբ կազմակերպիչն ինքը չի հանցանք կատարելու դիտավորություն առաջացնում կատարողի մեջ, ինչպես նաև օժանդակության դեպքում, այս հանցակիցների արարքները համատեղ արդյունքի հետ պատճառական կապի մեջ չեն, այլ միայն

պայմանի դեր են կատարում: Սրա հետ կապված՝ մեզ հետաքրքրում է այլ հարց: Քրեական իրավունքի տեսության մեջ ընդունված է, որ հանցակցությունը հնարավոր է մինչև հանցագործությունն ավարտվելը: Հանցագործությունները շատ դեպքերում երկու ավարտի պահ են ունենում՝ իրավաբանական և փաստական: Հարց է առաջանում՝ ո՞ր պահը պետք է նկատի ունենանք՝ հանցագործության իրավաբանական, թե՛ փաստական ավարտի պահը: Ասվածի արդիականությունը հիմնավորենք իրավակիրառ պրակտիկայից վերցված օրինակով: 2019 թվականի փետրվարի 4-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Երվանդ Քոչար փողոցում տաքսի ծառայություն մատուցող Յու. Ք-ի նկատմամբ ավազակային հարձակում գործելու դիտավորությամբ Է. Գ-ն դանակի գործադրմամբ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով նրան գումար տալու պահանջ է ներկայացրել, որից հետո, Գ. Գ-ն միացել է հարձակմանը և Է. Գ.-ի գործողությունները լրացնելով՝ հանցավոր դիտավորությունն ի կատար ածելու ու գումար հափշտակելու նպատակով ստուգել է սուժողի գրպանը, իսկ Է. Գ.-ն, շարունակելով հանցավոր մտադրությունը, հարվածներ է հասցրել Յու. Ք-ին՝ վերջինիս առողջությանը պատճառելով ծանր վնաս: Հարց է առաջանում, թե ինչպես պետք է որակվեն Գ. Գ.-ի գործողությունները: Ինչպես գիտենք՝ ավազակային հարձակումը, որը հափշտակության եղանակ է, իրավաբանորեն ավարտված է համարվում հարձակման պահից: Այսինքն՝ սպառնալիքը տալու պահից Է. Գ.-ն արդեն ավարտել էր ավազակային հարձակումը: Գույքին տիրանալու հետ կապված գործողությունները դուրս են այս հանցակազմի շրջանակներից: Նույնպիսի իրավիճակ կարող է լինել շորթման դեպքում: Ոմն Ա. Ս. առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքով գույքը հանձնելու պահանջ է ներկայացնում Դ. Պ.-ին: Մինչ այդ նա իր ընկեր Ս. Վ.-ի հետ համաձայնության է գալիս առ այն, որ իր կողմից շորթումը կատարելու հաջորդ օրը վերջինս կամրապնդի պահանջը՝ Դ. Պ.-ին նորից սպառնալով և իրենց սպառնալիքների լրջու-

8. Տե՛ս Энциклопедия уголовного права. Т.6, СПб 2007, էջ 39-88:
 9. Տե՛ս Энциклопедия уголовного права. Т.6, СПб 2007, էջ 49:
 10. Տե՛ս նույն տեղում, էջ48-49:

թյան մեջ նրան հավաստիացնելով, ինչն էլ Ս. Վ.-ն կատարում է: Շորթումը ավարտվել էր Ա. Ս.-ի կողմից պահանջը ներկայացնելու պահից: Ըստ էության, Ս. Վ.-ն նույնպես անմիջականորեն իրականացնում է շորթման օբյեկտիվ կողմը: Նկարագրված երկու դեպքերում էլ հանցագործություններն իրավաբանորեն ավարտվել էին: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ այս դեպքերում ևս առկա է հանցակցությունը: Առաջին դեպքում հանցակիցը փաստորեն օգտվեց մյուս հանցակցի կողմից գործադրված սպառնալիքից և գույքին տիրացավ՝ այդ սպառնալիքի ազդեցությունն օգտագործելով: Նման իրավիճակում ճիշտ չի թվում նրա

արարքը որակել որպես կողոպուտ: Երկրորդ դեպքում հանցակիցն իրականացրեց հանցագործության օբյեկտիվ կողմը նախնական համաձայնությամբ, ճիշտ է՝ հանցանքն ավարտվելուց հետո: Եթե առաջին հանցավորի և երկրորդի միջև որևէ պայմանավորվածություն չլիներ, ապա հանցակցությունը կբացակայեր: Այսպիսով, կարելի է ձևակերպել հետևյալ կանոնը. հանցակցությունը հնարավոր է նախքան հանցանքը փաստացի ավարտվելը, եթե հանցավորների միջև առկա է եղել կատարվող արարքների կապակցությամբ համաձայնություն:

